ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԻՆ-21/11/1

ք.Երևան « 11 » 11 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս՝ գլխավոր քարտուղար Լիլիթ Միրզախանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄԱՐՓ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս « ԱՐՄԱՐՓ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գյուղ գագարին, Գործարանային փողոց 14 հասցեներում գտնվող Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացված տարածքների չափագրման և սահմանված հատակագծերի կազմման ծառայություններ, այսուհետ՝ Ծառայություններ:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է՝ մինչև 11.11.2021թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ.

2.1.3. Պատվիրատուի պահանջով 15 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գինը,

2.3. Ծառայությունների մատուցման ավարտից հետո 3 օրվա ընթացքում ներկայացնել մատուցված ծառայությունների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություն:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:

3.Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3.2. Պատվիրատուն Կատարողին վճարում է հանձնման-ընդունման և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0.05 տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.05 տոկոսի չափով:
4.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները նրա անբաժանելի մասն են:
7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Ա.Միկոյան 109/8
Հ/Հ՝ 90011001352
ՀՎՀՀ՝ 00153247

ԱԻՆ գլխավոր քարտուղար՝

---------- Լ.Միրզախանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄԱՐՓ» ՍՊԸ
Հասցե՝ ք Սևան, Նաիրյան փ.164
«ՎՏԲ բանկ»
Հ/Հ՝ 16034027343400
ՀՎՀՀ՝ 08623175
Տնօրեն՝

----------Ա.Նիկողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1
«11» 11 2021թ.

կնքված

N ԱԻՆ-21/11/1 ծածկագրով պայմանագրի

ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայություն							
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
		Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գյուղ գագարին, Գործարանային փողոց 14հասցեներում գտնվող Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացված տարածքների չափագրման	դրամ	60000	1	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գյուղ գագարին, Գործարանային փողոց 14	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 25.11.2021թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Ա.Միկոյան 109/8
Հ/Հ՝ 90011001352
ՀՎՀՀ՝ 00153247

ԱԻՆ գլխավոր քարտուղար՝

---------- Լ.Միրզախանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄԱՐՓ» ՍՊԸ
Հասցե՝ ք Սևան, Նաիրյան փ.164
«ՎՏԲ բանկ»
Հ/Հ՝ 16034027343400
ՀՎՀՀ՝ 08623175
Տնօրեն՝

----------Ա.Նիկողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

կնքված

Հավելված N 2
« 11 » 11 2021թ.
N ԱԻՆ-21/11/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ ամիսների											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	-	Չափագրման ծառայություններ											60 000	60 000	60 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Ա.Միկոյան 109/8
Հ/Հ՝ 90011001352
ՀՎՀՀ՝ 00153247

ԱԻՆ գլխավոր քարտուղար՝

---------- Լ.Միրզախանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄԱՐՓ» ՍՊԸ
Հասցե՝ ք Սևան, Նաիրյան փ.164
«ՎՏԲ բանկ»
Հ/Հ՝ 16034027343400
ՀՎՀՀ՝ 08623175
Տնօրեն՝

---------- Ա.Նիկողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 11 » 11 2021թ. կնքված
***N ԱԻՆ-21/11/1** ծածկագրով պայմանագրի*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ __ Չափագրման ծառայություն
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_11___» «_____11_____» 2021 թ.
Պայմանագրի համարը՝ ___ ***N ԱԻՆ-21/11/1***_____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2021թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	Չափագրման ծառայություն		-	Ծառայություն	.			

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն
Ա.Նիկողոսյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն
Լ.Միրզախանյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 11 » 11 2021թ. կնքված
***N ԱԻՆ-21/11/1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N 1
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում Լ.Միրզախանյան-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ա.Նիկողոսյան-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 2021թ. 11. 11 -ին կնքված N ***ԱԻՆ-21/11/1***
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2021թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, գյուղ գագարին, Գործարանային փողոց 14հասցեներում գտնվող Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացված տարածքների չափագրում	Ծառայություն	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ա.Նիկողոսյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

Լ.Միրզախանյան
ազգանուն, անուն

ստորագրություն